

Արձանագրություն թիվ 3

Գավառի պետական համալսարանի 2018 թվականի փետրվարի 7-ի ռեկտորատի նիստի

Օրակարգ

1. Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում
2. Քննաշրջանի ընթացքը առկա ուսուցման ֆակուլտետներում
3. «ԳՊՀ- ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցներ» կապերի ակտիվացման, ԳՊՀ իրականացրած մասնագիտական կրթական ծրագրերի և ընդունելության քննությունների մասին տեղեկատվության տարածման մասին
4. ԳՊՀ ֆակուլտետների և ամբիոնների գործունեության հաշվետվությունների ներկայացման մասին
5. «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսին համապատասխան միջոցառումների կազմակերպման և անցկացման մասին
6. «Մարդարապատից՝ Արցախ» խորագրով ձեռարկեստի աշխատանքների, չափաձո և արձակ ստեղծագործությունների մրցույթի կազմակերպման մասին
7. Ստեփան Գիշանի անվան հիմնադրամի հայտարարած դրամաշնորհային մրցույթին մասնակցության մասին
8. Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը
9. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էին ռեկտորատի 14 անդամներ:

1. **Լսեցին** - Ուսումնական գործընթացը հեռակա ուսուցման ֆակուլտետում:

/Զեկ.՝ ՀՈՒՖ փոխդեկան Մ. Վ. Գարեյան/

Ներկայացվեցին ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով իրականացվող աշխատանքները՝ հետևյալ ուղղություններով. ուսանողների հաճախումների վերահսկում, նկատողությունների և խիստ նկատողությունների հայտարարում, բանակից գորացրված և ժամանակավոր կցագրում ստացած ուսանողների հետ հստակ աշխատանքների կազմակերպում:

2. **Լսեցին** - Քննաշրջանի ընթացքն առկա ուսուցման ֆակուլտետներում:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների դեկաններ/

Ներկայացվեցին սահմանված ժամանակացույցով անցկացված քննությունների արդյունքները:

3. **Լսեցին** - «ԳՊՀ- ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցներ» կապերի ակտիվացման, ԳՊՀ

իրականացրած մասնագիտական կրթական ծրագրերի և ընդունելության քննությունների մասին տեղեկատվության տարածման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Նշվեց, որ «ԳՊՀ- ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցներ» կապերի ակտիվացման կարևորությունը շեշտադրվել է նաև Հոգաբարձուների խորհրդի նախագահ Հ. Հ. Հակոբյանի կողմից: Հանձնարարվեց՝ ԳՊՀ ներկայացուցիչները մարտ ամսվա ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների վարչական անձնակազմի, աշակերտների և ծնողների հետ ունենան հանդիպումներ, անցկացնեն

մասնագիտական կողմնորոշման դասեր, տրամադրեն ԳՊՀ-ին վերաբերող պատշաճ տեղեկատվություն:

4. **Լսեցին** - ԳՊՀ ֆակուլտետների և ամբիոնների գործունեության հաշվետվությունների ներկայացման մասին:

/Զեկ.՝ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Ա. Կուտուզյան/

Ներկայացվեց և քննարկվեց ֆակուլտետների և ամբիոնների գործունեության հաշվետվությունների ժամանակացույցը:

5. **Լսեցին** - «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ»

կարգախոսին համապատասխան միջոցառումների կազմակերպման և անցկացման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Նշվեց, որ «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսի ներքո անցկացվելիք միջոցառումները հստակեցվում են լաբորանտների, դասախոսների և ուսանողների հետ:

6. **Լսեցին** - «Սարդարապատից՝ Արցախ» խորագրով ձեռարկեստի աշխատանքների, չափածո և արձակ ստեղծագործությունների մրցույթի կազմակերպման մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին «Սարդարապատից՝ Արցախ» խորագրով ստեղծագործությունների մրցույթի անցկացման նպատակով իրականացվող աշխատանքները:

7. **Լսեցին** - Ստեփան Գիշյանի անվան հիմնադրամի հայտարարած դրամաշնորհային մրցույթին մասնակցության մասին:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Ներկայացվեցին Ստեփան Գիշյանի անվան հիմնադրամի կողմից հայտարարած դրամաշնորհային մրցույթին մասնակցության պայմաններն, պահանջները և վերջնաժամկետը:

8. **Լսեցին** - Ուսանողների ուսման վարձերի վճարման ընթացքը:

/Զեկ.՝ ԳՊՀ ֆակուլտետների ղեկաններ/

Ներկայացվեցին ըստ բաժինների և կուրսերի ուսանողների ուսման վարձերի մնացորդային պարտքերը, և դրանց հավաքագրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

9. **Լսեցին** - Ընթացիկ հարցեր:

9.1 ԳՊՀ-ում «TEDX» հանդիպման կազմակերպման հարցի քննարկում:

/Զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան/

Նշվեց, որ ԳՊՀ-ի մեծ դահլիճում փետրվարի 17-ին, ժամը 12⁰⁰-ին տեղի կունենա «Tedx» հանդիպումը՝ Գեղարքունիքի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի բացմանն

ընդառաջ, ներկայացվեցին հանդիպման կազմակերպման նպատակի, անցկացման ընթացքի վերաբերյալ մանրամասներ:

Որոշեցին.

1. ՀՈՒՖ ուսանողներին լիարժեք իրազեկելու նպատակով մշակել հաջորդական գործողությունների տեղեկատվական թերթիկ, և այն տեղակայել պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում.
2. Խիստ նկատողություն ստացած ուսանողների կարգապահության բարձրացման նպատակով կատարել նպատակաուղղված և հետևողական աշխատանք.
3. Ապահովել պրակտիկանների անցկացման պայմանագրերի կնքումը և կատարումը.
4. «Tedx» հանդիպման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ուսանողությանը, տեղակայել պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Ռեկտոր՝

Ռ. Խ. Հակոբյան

Քարտուղար՝

Ն. Ա. Միրիբյան